Հրապարակման ենթակա չէ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԱՆՈՒՆԸ ԱԶԳԱՆՈՒՆԸ**
   Սուրեն Պապիկյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**
   Իրանի Իսլամական Հանրապետություն (Թեհրան), 2019թ նոյեմբերի 1-ից 3-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   ԻԻՀ էներգետիկայի նախարար Ռեզա Արդաքանեան

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   Համապատասխան ոլորտները համակարգող գործընկեր նախարարների հետ հանդիպումներ ունենալ, ինչպես նաև մասնակցել Էլեկտրաէներգիայի 19-րդ միջազգային ցուցահանդեսին:

6. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Պատվիրակության անդամների հետ միասին մասնակցել եմ Թեհրանում կայացած իրանական էլեկտրաէներգիայի 19-րդ միջազգային ցուցահանդեսին, որտեղ ծանոթացել եմ 13 երկրների ընկերությունների կողմից ներկայացված էլեկտրաէներգետիկ արտադրանքի ու սարքավորումների վերջին նորություններին և արտադրական հզորություններին: Ցուցահանդեսի շրջանակներում հանդիպում եմ ունեցել Իրանում էներգետիկ սարքավորումների ամենամեծ արտադրող Մափնա ընկերության ներկայացուցիչների հետ և մտքեր փոխանակել համագործակցության հնարավորությունների շուրջ:

Հանդիպել եմ ԻԻՀ էներգետիկայի նախարար Ռեզա Արդաքանեանի հետ: Նրա հետ քննարկում եմ ունեցել էներգետիկ ոլորտում հայ-իրանական օրակարգի մի շարք կարևոր հարցերի շուրջ: Մասնավորապես անդրադարձել ենք ԵԱՏՄ բարձրագույն տնտեսական խորհրդի երևանյան նիստի շրջանակներում երկու երկրների ղեկավարների միջև ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման ընթացքին: Նշել եմ, որ հայ-իրանական բարձր մակարդակի քաղաքական համագործակցությունը, փոխադարձ այցերը ռազմավարական նոր ուղղություններ բացահայտելու հնարավորություն են ստեղծում: Խոսելով էներգետիկ ցուցահանդեսի կարևորության մասին՝ երկուստեք արձանագրել ենք, որ այն հիանալի հարթակ էր բացահայտելու էներգետիկ ոլորտում տարածաշրջանային կարևոր դերակատարություն ունեցող ԻԻՀ

ձեռքբերումներն ու տեղական արտադրության էներգետիկ սարքավորումների նորարություններն ու կարողությունները:

Հանդիպման ընթացքում անդրադարձել եմ նաև Իրան-Հայաստան 400կվտ լարման էլեկտրահաղորդման 3-րդ գծի շինարարության ընթացքին և մեկ անգամ ևս իրանական կողմի ուշադրությունը հրավիրել հայ-իրանական միջկառավարական հանձնաժողովի 16-րդ նիստի ընթացքում այս ուղղությամբ ձեռք բերված պայմանավորվածությանը, համաձայն որի նախատեսվում է շինարարական աշխատանքներն ավարտել 2020թ դեկտեմբերին:

Ներկայացրել եմ նաև Հայաստան-Վրաստան էլեկտրահաղորդման գծի կառուցման ծրագրի ընթացիկ փուլի և էլեկտրաէներգիայի տարածաշրջանային շուկայի ձևավորման հեռանկարը, որտեղ Հայաստանը կարող է հանդես գալ որպես էներգետիկ միջանցքի տարանցիկ դերակատար ԵԱՏՄ էլեկտրաէներգետիկական ընդհանուր շուկայի և Իրանի էներգահամակարգերի միջև:

Քննարկել ենք Մեղրու ՀԷԿ-ի կառուցման, ներդրումների մեծացման ուղղությամբ տարվող աշխատանքների, ինչպես նաև գազ-էլեկտրաէներգիայի փոխանակման ծրագրի վերաբերյալ մի շարք արդիական հարցեր: Հնչեցրել եմ նաև Թուրքմենստանից ԻԻՀ տարածքով Հայաստան գազի ներկրման առաջարկը՝ ներկայացնելով այդ ծրագիրը կյանքի կոչելու հնարավոր տարբերակները: Առաջարկել եմ նաև հարցին անդրադառնալ ՀՀ և ԻԻՀ միջև գործող միջկառավարական հանձնաժողովի աշխատանքների ձևաչափում:

Պատվիրակության հաջորդ հանդիպումը Իրանի ճանապարհաշինության և քաղաքաշինության նախարար Մոհամմադ Էսլամիի հետ էր, ում հետ անդրադարձ կատարվեց միջպետական մայրուղիների կառուցմանը, սահմանային հատվածներում ճանապարհային ենթակառուցվածքների վերականգնմանն ու ամրացմանը, ինչպես նաև բեռնափոխադրումների գործընթացում ընթացակարգերի կանոնակարգմանն ու դյուրինացմանն առնչվող հարցերին:

Հատկապես ընդգծել եմ դեպի ԵԱՏՄ շուկա Հայաստանի միջոցով և դեպի Մերձավոր Արևելք Իրանի միջոցով Հայաստանի և Իրանի տարանցման հնարավորությունների ընդլայնման և այլ առևտրաշրջանառության առկա մակարդակը բարձրացնելու հնարավորությունների անհրաժեշտությունը՝ կարևորելով Հյուսիս-Հարավ մայրուղու Ագարան-Քաջարան-Սիսիան ճանապարհահատվածի կառուցումը: Այս համատեքստում քննարկել ենք նաև նշված ճանապարհահատվածի կառուցման համար անհրաժեշտ ֆինանսների ներգրավման հնարավոր տարբերակներին: Անդրադարձ կատարվեց նաև հարավային երկաթգծի կառուցման հնարավորություններին, բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների հետ կապված հարցերին: Իրանական կողմն էլ պատրաստակամություն հայտնեց միջպետական ճանապարհների կառուցման հետ կապված հարցերը ուշադրության կենտրոնում պահելու և անհրաժեշտ աշխատանքներն իրականացնելու համար:

Հանդիպեցինք նաև Իրանի նավթի նախարար Բիժան Զանգանեի հետ: Նավթի նախարարի հետ քննարկեցինք փոխադարձ հետաքրքրություն

ներկայացնող մի շարք հարցեր: Անդրադարձ կատարեցինք ճանապարհաշինության համար անհրաժեշտ օրգանական կապակցանյութի՝ նավթային հիմքով բիտումի Հայաստան մատակարարման պայմաններին, գազ՝ էլեկտրանէներգիայի դիմաց փոխանակման ծրագրի շրջանակում եղած հնարավորությունները առավել արդյունավետ կերպով օգտագործելուն:

Իրանական կողմը հայտնեց իր պատրաստակամությունը համագործակցությունը առավել գործնական հիմքերի վրա դնելու և այդ համատեքստում անհրաժեշտ աշխատանքներ իրականացնելու համար: Առավել մանրամասներ քննարկելու և համագործակցությունը ամրապնդելու համար նախարար Զանգանեին հրավիրեցի Հայաստան:

7. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հանդիպումների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունները կյանքի կոչելու, աշխատանքները պատշաճ և ժամանակին իրականացնելու, ինչպես նաև երկուստեք հնչեցված հարցերը հարցերը առավել մանրամասն քննարկելու նպատակով կստեղծվի ենթակառուցվածքային համատեղ հանձնաժողով, որը նախանշված ժամկետներում կառանձնացնի ենթակառուցվածքային ոլորտներում երկու երկրների փոխգործակցության ընդլայնման ուղղությունները, առկա խնդիրները և դրանց կարգավորվման ուղղված լուծումները:

8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Շարունակել և ակտիվացնել հայ-իրանական համագործակցությունը ենթակառուցվածքների ոլորտում և նախանշված հարցերի և խնդիրների լուծումը տեղափոխել առավել գործնական հարթություն:

9. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

5.11.2019թ.